# ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (01.02.2016-09.06.2016) ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-ԻՆ ԵՎ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հինգերորդ գումարման իններորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 7 չորսօրյա և 3 արտահերթ նիստ՝ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ: Հերթական նստաշրջանի ավարտից հետո գումարվել է 2 արտահերթ նստաշրջան՝ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 156 հարց, որից 92-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, 61-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների(1-ը ՀՀ Ազգային Ժողովի որոշում), իսկ 3-ը պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր էին: Օրակարգի միջազգային պայմանագրերի վավերացման մասին բաժինն ընդգրկում էր 41 միջազգային համաձայնագիր:

Հետագայում նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 54 հարցով, այդ թվում՝ 37-ը ՀՀ կառավարության նախաձեռնություն, 8-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորական նախաձեռնություն և 9-ը՝ պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող այլ հարցեր: Օրակարգը լրացվել է նաև 7 միջազգային պայմանագրով: Նստաշրջանի օրակարգի՝ կառավարության նախաձեռնությամբ լրացումների մեջ էր նաև Հայաստանի Հանրապետության Ընտրական նոր օրենսգրքի նախագիծը:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 258 հարցերից (ներառյալ միջազգային պայամանագրերը) 198-ը օրենքների նախագծեր կամ նախագծերի փաթեթներ էին, որոնցից գարնանային նստաշրջանի, դրա ընթացքում գումարված արտահերթ նիստերի և գարնանային նստաշրջանից հետո գումարված արտահերթ

նստաշրջանների ընթացքում քննարկվել և ամբողջությամբ ընդունվել են 42-ը, որոնցից 38-ը՝ ՀՀ կառավարության (9-ը կառավարության որոշմամբ՝ անհետաձգելի), իսկ 4-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների նախաձեռնած նախագծեր էին: Միջազգային պայմանագրերից զատ քննարկվել է 9 պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարց: Ամբողջությամբ ընդունված 42 օրենքներից կամ օրենքի նախագծերի փաթեթներից 5-ը մայր օրենքներ են, որոնք ՀՀ կառավարության նախաձեռնություններն էին: Ընդունված նախագծերից ուշագրավ էին հատկապես՝ «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որի կիրարկումը կամրագրի Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ստեղծման և գործունության իրավական հիմքերը, «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որը թույլ կտա ապահովել դեղերի ֆիզիկական և ֆինանսական էական մատչելիություն, բնակչությանը որակյալ և արդյունավետ դեղերի մատակարարում և իհարկե Ընտրական նոր օրենսգրքի նախագիծը, որի ընդունման ժամկետները նախատեսված էին 2015 թվականի Սահմանադրական փոփոխությունների մեջ:

Նստաշրջանի ընթացքում ՀՀ ԱԺ պատգամավորների նախաձեռնությամբ ընդունվեց նաև 1 ԱԺ որոշում (Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հինգերորդ գումարման մշտական հանձնաժողովների թիվը, անվանումները և գործունեության ոլորտները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 31-ի ԱԺՈ- 004-Ա որոշման մեջ լրացում կատարելու և Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում ընտրելու համար Ազգային ժողովին թեկնածու առաջարկելու կարգի մասին»)՝ որի ընդունումը պայմանավորված էր 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով: ԱԺ-ն նաև քննարկեց և քվեարկությամբ մերժեց 2 օրենքի նախագծի ընդունման մասին հարցը (մեկը՝ ՀՀ կառավարության նախաձեռնություն, մյուսը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների), ինչպես նաև ԱԺ պատգամավորների նախաձեռնած 7 օրենքի նախագծի՝ ՀՀ ԱԺ նստաշրջանի օրակարգ ընդգրկելու մասին հարցը:

Նստաշրջանի ընթացքում՝

- ԱԺ-ի կողմից ընդունվեց Հայաստանի Հանրապետության Ընտրական նոր օրենսգիրքը, որը հետագայում լրամշակվեց քաղաքական ուժերի կոնսենսուսի շնորհիվ ձևավորված առաջարկությունների հիման վրա:
- ԱԺ-ի կողմից քննարկվեց և ընդունեց «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայստանի Հանրապետության օրենքի նախագիծը :
- ԱԺ-ն 96 կողմ, 7 դեմ, (4 քվեաթերթիկ համարվել է անվավեր) ձայներով Հայաստանի Հանրապետության Մարդու Իրավունքների Պաշտպան ընտրեց Արման Թաթոյանին:
- Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի որոշմամբ՝ համամասնական ընտրակարգով, ՀՅԴ-ի ընտրական ցուցակից ԱԺ պատգամավոր գրանցվեց Կարեն Շահմուրադյանը:
- ԱԺ-ն 88 կողմ, 15 դեմ, 14 ձեռնպահ ձայներով հաստատեց Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:
- ԱԺ-ն 86 կողմ, 16 դեմ, 13 ձեռնպահ ձայներով ընդունեց «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի կատարման 2014 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:
- Քննարկվեց և ընդունվեց ի գիտություն՝
  - Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2015 թվականի գործունեության մասին հաղորդումը:
  - Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի գործունեության ծրագիրը:
  - Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2015 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը (գնաճի հաշվետվությունը):
  - Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2016 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագիրը:
  - Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2016 թվականի տարեկան գործունեության ծրագիրը:

- Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2015 թվականի տարեկան հաշվետվությունը:

Նստաշրջանի ընթացքում ԱԺ պատգամավորները ՀՀ կառավարությանը դիմել են 19 գրավոր, որոնցից ՀՀ ԱԺ նիստերի ընթացքում հնչել է 11-ը և 64 բանավոր հարցով: Հնչել է 141 պատգամավորական հայտարարություն, որոնցից 33-ը վերաբերում էր գործադիրի գործունեությանը:

Նստաշրջանների ընթացքում վավերացվեց 31 միջազգային պայմանագիր, այդ թվում՝ 2015 թվականի դեկտեմբերի 23-ին Մոսկվայում ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հավաքական անվտան-գության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին» համաձայնագիրը, ինչպես նաև մի շարք վարկային համաձայնագրեր միջազգային այնպիսի բանկերի հետ, ինչպիսիք են՝ ԵՎրոպական ներդրումային բանկը, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը, ԵՎրասիականՀ զարգացման բանկը, Ասիական զարգացման բանկը: